ԱԶԳ

[illegible]

ԴՊՐՈՑ

# Հայկական կրթությունը վտանգավո՞ր է առողջության համար

[illegible]



[illegible]

ԱՐՄԱՆ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

ՀՈԳՍԵՐ

# Ավտոբուսներին էլ է բնական գազ պետք... երբ ճարվի

Նորից քաղաքային էլեկտրատրանսպորտը աշխատում է ընդհատումներով, եւ մարդիկ հարկադրված են ոտքով կիլոմետրեր անցնել: Երթուղային տաքսիները ամենքի գրպանի բանը չեն: Ավտոբուսային հաղորդակցությունն էլ իրենց հերթին տրտնջում են, որ վառելանյութը թանկ է, եկամուտը չի ծածկում մեքենաների սպասարկման ծախսերը:

Այստեղ փրկության միայն մեկ միջոց կա. ավտոբուսները բնական գազով աշխատեցնելը: Սակայն մայրաքաղաքի եւ միջքաղաքային երթուղիներում աշխատող ոչ բոլոր ավտոբուսներն են, որ ունեն բնական գազով աշխատելու հարմարանքներ: Ինչ խոսք, գազով աշխատող ավտոբուսները քիչ են եւ մարդկանց տեղափոխման ամբողջ ծանրությունը հոգալ չեն կարող: Այնուամենայնիվ դրանց անխափան աշխատանքի ապահովումը մի բան է, որ չափով կարող է թեթեւացնել վիճակը: Երբ հանրապետությունը բնական գազ չի ստանում, կամ ստացվող գազի ծավալը անբավարար է, ապա դրան զուգահեռ նվազում է երթուղիներ դուրս եկող գազով աշխատող ավտոբուսների քանակը: Այդպիսիք կարող են օրվա ընթացքում լիցքավորվել երկու անգամ եւ ավելի շատ կիլոմետրաժ կատարել: Բայց Հայգազկոնցեռնի ավտոմեքենաների գազի լիցքավորման Նուբարաշենի կոմպրեսորային թիվ 1 կայանն էլ իր հոգսերն ունի: Այն հիմնադրվել է 1986 թվականին, երբ բնական գազով լիցքավորվող դեռ հատուկենտ ավտոմեքենաներ կային: Այն ժամանակ կայանում գործում էր լիցքավորման ընդամենը 3-4 կետ, եւ դա լրիվ բավարարում էր պահանջարկը: Նվազեց հեղուկ վառելանյութը, աստիճանաբար ավելացավ բնական գազով աշխատող ավտոմեքենաների խանակը, եւ դրանց սպասարկումն ապահովելու համար ավելացավ նաեւ լիցքավորման կետերի թիվը: Այժմ կայանն ունի լիցքավորման 8 կետ, որոնք օրվա ընթացքում ի վիճակի են լիցքավորելու 500-600 ավտոմեքենա: Սակայն, ինչպես ժողովուրդն է ասում՝ երկու երնեկ մեկտեղ չի լինում: Գազի լիցքավորման Նուբարաշենի կայանում նկատեցինք լիցքավորման սպասող ավտոմեքենաների մեծ հերթեր: Պարզվեց, որ այստեղ էլ իրենց սեւ գործն են անում էլեկտրաէներգիայի անջատումները, ինչպես նաեւ ներմուծվող գազի ծավալների կրճատումները:

Կայանի հերթափոխի պետ, ինժեներ Աղասի Մարգարյանը տեղեկացրեց, որ հերթերի գոյացման պատճառը հիմնականում հոսանքի անջատումներն են: Գազի բավարար ճնշման դեպքում մեկ մեքենան լիցքավորելու համար պահանջվում է 10 րոպե, իսկ երբ նվազում է, այդ տեւողությունը կրկնապատկվում, եռապատկվում է:

Քանի որ գազի ներհոսքի ապահովումը մեր օրերում նույնիսկ խոսք պետական, կառավարական խնդիր է, ապա կարելի է կայանը մասամբ էլեկտրաէներգիայով ապահովել, երբ այն դասվի էլեկտրաէներգիայով մասամբ ապահովվող ձեռնարկությունների շարքին: Այդ դեպքում առնվազն գազի բավարար քանակ ունենալու ժամանակ հնարավոր կլինի կրճատել լիցքավորման կայանի պարապուրդները, վերացնել հերթերը, ինչ որ չափով բարելավել տրանսպորտային միջոցների անխափան աշխատանքը:

Կար ժամանակ, երբ լիցքավորման աշխատանքներին խանգարում էր նաեւ դեպի կայան տանող ճանապարհների ու կայանի տարածքի անբարեկարգ վիճակը: Այժմ արդեն դա վերացվել է: Բացի այդ, առաջին անհրաժեշտության օբյեկտներին սպասարկող ավտոտրանսպորտի՝ ավտոբուսների, երթուղային տաքսիների, հաց, այլ սննդամթերք տեղափոխող մեքենաների արտահերթ սպասարկման համար հատկացվել է լիցքավորման 4 կետ ու բացվել է կայան մուտք գործելու առանձին ճանապարհ: Կայանում սպասարկման բարելավմանը մեծապես նպաստում է նաեւ տեղադրված համակարգիչների առկայությունը, ինչը բացառում է խորթ երեւույթների կիրառումը աշխատանքում: Երթուղիներում ավելի շատ ու ավելի երկար ժամանակով ավտոբուսների աշխատանքն ապահովելու համար գուցե անհրաժեշտ է լիցքավորման կայաններում ավելացնել լիցքավորող կետերի թիվը եւ գոնե ցերեկային ժամերին դրանք էլեկտրասնուցմամբ ապահովել:

ԴԵՐԵՆԻԿ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ԳՅՈՒՂ

# Ջրաղացները ավերվել են, էլաղացները չեն գործում

[illegible]

Գ. Գ.

digitised by A.R.A.R.@

EREBUNI MEDICAL CENTER
ORL SERVICE UMAF

ԼՕՌ բաժանմունքը հագեցված է բոլոր ժամանակակից յուրահատուկ սարքավորումներով, որոնք միակն են Հայաստանում: Դրանք հնարավորություն են ընձեռում ախտորոշել քթի, կոկորդի եւ ականջի հիվանդությունները եւ կատարել յուրահատուկ բարդ վիրահատություններ նորագույն եղանակներով, այդ թվում

- ԼՕՌ օրգանների ֆիբրոսկոպիա (ներքին զննում)
- թմբկային աուդիոմետրիա (լսողության ֆունկցիաների ստուգում)
- լսողական ապարատների ընտրություններ եւ պրոտեզավորում
- լսողությունը վերականգնող վիրահատություններ
- դիմային կոսմետիկ վիրահատություններ (ականջի եւ քթի)
- կոկորդի միկրովիրահատություններ
- եւ այլն ...

Վիրահատությունների մեծ մասը կատարվում է ընդհանուր անզգայացումով: Ձեզ կբուժեն լավագույն բժիշկները, որոնք որակավորում են ստացել Եվրոպայի եւ ԱՄՆ-ի լավագույն բժշկական կենտրոններում:
Մեզ կարող եք դիմել հետեւյալ հասցեով. Էրեբունի բժշկական կենտրոն ԼՕՌ բաժանմունք, հեռ. 47 23 70, 47 24 90

ԷՐԵԲՈՒՆԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ
ԼՕՌ ԲԱԺԱՆՄՈՒՆՔ



ԾՆՆԴՅԱՆ ՏՈՆԵՐԸ
ՓԱՐԻԶՈՒՄ
դեկտեմբերի 22-29
«Էրեբունի» հյուրանոց, «Խաչքար» տուրիստական ֆիրմա, 1-ին մասնաշենք, 424 սենյակ, հեռ. 56-57-57



ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ
ՀՐԱՏԱՐԱԿՉԱԿԱՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ
A STYLE
ORIGINAL DESIGN
ՕԳՏՎԵՔ ՄԵՐ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ
ՄԵՆՔ ՊԱՏՐԱՍՏ ԵՆՔ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑԵԼ
Մեր հասցեն՝ Երեւան, Հանրապետության 47,
Հեռախոս՝ 581841



ԱԱԼ ՀԱՅԿԱԿԱՆ ԱՎԻԱՈՒՂԻՆԵՐ



Նոր կանոնավոր չվերթ դեպի
ԱՄՍՏԵՐԴԱՄ
ամեն շաբաթ օր, սկսած նոյեմբերի 19-ից:

Տեղեկությունների համար դիմեք «ԱԱԼ» գործակալություններ
53-03-03
53-06-62



Լույս է տեսել
ԳԻՆԴ
ՏԵՂԵԿԱՏՈՒԻ
կոզմից հրատարակվող
ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՏԵՂԵԿԱԳՐՔԻ
հերթական թողարկումը

A STYLE

Ցանկացողներին տեղեկագիրը կուղարկվի իրենց նշված հասցեով, առանց հավելավճարի:
Զանգահարել՝
58 13 51, 58 91 67



ՌՈՒՍԱՍՏԱՆՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԱՎԻԱԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ
AEROFLOT
ՌՈՒՍԱՍՏԱՆՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԱՎԻԱՈՒՂԻՆԵՐ



կանոնավոր
անվայրէջք թռիչքներ
Երեւան - Մոսկվա (СУ-194 չվերթ)
եւ Մոսկվայից դեպի աշխարհի 108 երկրների
154 քաղաք
Ամենագրավիչ պայմանները
Ձեր օդային ուղեւորությունների համար
Տոմսերը վաճառվում են միայն հետեւյալ հասցեով
Սարյանի փ. 22, Գլխավոր փոստատուն, Ը-ին հարկ
Զանգահարեք՝ 53-21-31, 22-35-80


# ՄԻ՛ ԴԱՐՁԵՔ ՌԵԺԻՄԻ ԳԵՐԻՆ
# ԿԵՐԱԿՐԵ՛Ք ՀԱՃԱԽ



Կրծքով հաջողությամբ կերակրելու համար հետեւեք երեխայի պահանջներին, ո՛չ թե ժամացույցին: Թույլ տվեք փոքրիկին սնվել, երբ նա սոված է, եւ՛ օրվա ընթացքում եւ թե գիշերը:
Կերակրե՛ք հաճախ: Հաճախակի կերակրելը կշատացնի կաթի քանակը: Այն կավելանա երեխայի պահանջին համապատասխան:

## Հետեւե՛ք ցուցումներին՝ կհասնեք հաջողության



Հիվանդանոցում երեխային միշտ ձեր սենյակում պահեք: Այսպիսով կարող եք հաճախ կերակրել թե ցերեկը եւ թե գիշերը:



Ո՛չ կաթ, ո՛չ ջուր, ո՛չ թեյ, ո՛չ հյութ: Ոչինչ հարկավոր չէ, բացի մայրական կաթից առաջին 4-ից 6 ամսում:

**Կերակրեք միա՛յն ու միայն կրծքով 4-ից 6 ամիս:**

Մայրական կաթ: Սա միակ սննդն է, որն անհրաժեշտ է երեխային կյանքի առաջին 4-ից 6 ամսում: Այն փոքրիկին կպաշտպանի վարակիչներից:

**Մի՛ մտահոգվեք կաթի քանակի ու որակի համար:**

Մի մտահոգվեք, որ աղքատիկ սնունդը կվնասի ձեր կաթնարտադրությանը: Նույնիսկ քիչ սնվելով դուք երեխային կպահովեք բավարար սննդարար կաթով:



Կրծքով կերակրելու նոր ցուցումների գրքույկը ձեռք բերելու համար դիմեք ձեր շրջանի պոլիկլինիկա

A STYLE 58.13.51

«Պարբերական» հրատարակչության տպարան. Երեւան 23 Արշակունյաց 2. Գրանցման թիվ 65. Պատվեր 69149. Պատասխ. 1916 Տպաքանակը 5000 Ստորագրված է տպագրության 18. 11. 1994 Գինը 25 դրամ

digitised by A.R.A.R.@